

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (գրադմունքի) անվանումը	ԴԵՐՁԱԿ
Դերը	<p>Դերձակի դերը կամ գրադմունքի բովանդակությունը</p> <p>ա) կարել տարբեր չափահասակների տղամարդու և կանացի հագուստ՝ օգտագործելով մանածագործական, ոչ գործվածքային նյութեր և կաշի բ) նորոգել և համաձայն պատվերի ձևափոխել հագուստը կամ պատվիրած կարածոները, գ) արտադրանքը խնամելու և պահպանելու նպատակով հաճախորդին տալ մասնագիտական խորհուրդներ, դ) արտադրության հոսքային գծում աշխատելու դեպքում կատարել տարբեր տեխնոլոգիական օպերացիաներ Դերձակը պետք է կարողանա աշխատել խմբի կազմում կամ միայնակ, աշխատել այլ աշխատողի ղեկավարությամբ կամ ղեկավարել ուրիշների աշխատանքը:</p>
Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստել աշխատատեղը	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> ▪ Աշխատանքն սկսելուց առաջ ստուգում է մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը, լիցքավորում է մեքենան: ▪ Հազնում է արտահագուստ, գլխարկ կամ գլխաշոր, նախապատրաստում է սեղանները, հատակը, դասավորում է աշխատանքային գործիքները: ▪ Ցուցադրում է գործվածքի նմուշներ, մոդաների ամսագրեր, հագուստների էսքիզներ:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Մեքենասարքավորումները պատրաստ են աշխատանքի և գործում են անխափան • Սանիտարական վիճակը բավարար է, պահպանված են աշխատանքի անվտանգության նորմերը, առկա են անհրաժեշտ գործիքները և նյութերը:
Խնդիրների բնագավառ 2. Ընդունել պատվեր	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> ▪ Երկխոսության միջոցով բացահայտում է պատվիրատուի նպատակը, ծանոթանում է առաջարկված գործվածքին կամ ինքն առաջարկում է իր նմուշները: ▪ Փոխադարձ համաձայնության է գալիս կատարման ժամկետի և գնի վերաբերյալ, համատեղ ընտրում են ֆուրնիտուրան, աստառացուն (եթե այն անհրաժեշտ է), հարդարող նյութերը: ▪ Փաստաթղթավորում է պատվերը:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Պատվերը ձևակերպված է՝ ըստ հաճախորդի հետ ձեռք բերված համաձայնության, հաճախորդը բավարարված է:
Խնդիրների բնագավառ 3. Ուրվագծել պատվերի էսքիզը և վերցնել հաճախորդի մարմնի չափսերը	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> ▪ Դերձակը կատարում է պատվերի էսքիզը, որի վրա նշում է պատվիրատուի առաջարկված էլեմենտների ձևերն ու չափերը, ըստ մոդելի տեղադրում է մանր մասնիկները: ▪ Վերցնում է հաճախորդի մարմնի չափսերը:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Պատրաստի էսքիզի առկայությունը՝ տեղադրված չափսերով:
Խնդիրների բնագավառ 4. Ձևել հագուստը և իրականացնել չափափորձ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> ▪ Քերցրած չափերին համապատասխան կավճագծում է գործվածքը, անհրաժեշտության դեպքում պատրաստում է ձևման լեկալներ: ▪ Ձևում է հագուստը, ստուգում և հարմարեցնում է չորվածքները:

	<ul style="list-style-type: none"> ▪ Բլանդում է հագուստը և հաճախորդին հրավիրում չափափորձի: ▪ Դերձակը հաճախորդի վրա ստուգում է նստեցվածքները, ուսագոտու, առաջամասի բորտերի և օձիքի շրջանում կատարում է համապատասխան ուղղումներ (կավճագծում է): ▪ Մեկ անգամ ևս ստուգում է հաճախորդի պահանջները և ցանկությունները:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Բլանդած հագուստը պատշաճ ձևով նստում է պատվիրատուի մարմնի վրա:
Խնդիրների բնագավառ 5. Կարել, նորոգել, ձևափոխել պատվիրված հագուստը կամ կարածու	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> ▪ Պատրաստում է հագուստը: ▪ Քանդում է բլանդի կարերը, աստառը մաքրում թելի մնացուկներից: ▪ Հագուստն արդուկում է և պահում: ▪ Ծերջնական չափափորձի ժամանակ պատրաստի հագուստը փորձում է մեծադիր հայելու առաջ, ստուգում է գրպանները, կոճկեղատեղերը, սեղմոնները: ▪ Փաթեթավորում է արտադրանքը և հանձնում հաճախորդին:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • հագուստը հարմարավետ նստում է հաճախորդի վրա: • հաճախորդը թերություններ չի հայտնաբերում:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուները	<ul style="list-style-type: none"> • Հայերեն՝ գերազանց • Մեկ օտար լեզու բավարար
Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • MS Word՝ բավարար • Internet Explorer՝ բավարար
Գիտելիքը	<ul style="list-style-type: none"> • աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի դեկավարի հետ. • աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները. • անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում. • արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները. • իմանա գործվածքների առանձնահատկությունները, դրանց օգտագործման բնագավառները. • մարդու մարմնի չափային հատկանիշները, ծանոթ լինի հագուստի նախագծման սկզբունքներին. • մանր մասնիկների մշակման տեխնոլոգիան. • արտադրանքի հիմնական հանգույցների միացման տեխնոլոգիական հաջորդականությունը և արտադրանքը վերջնական տեսքի բերելու գործողությունները:
Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը	<ul style="list-style-type: none"> • տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների. • դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ. • տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում. • դրսևորել քննադատական մտածողություն. • կառավարել սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ: • սահմանել ուսումնառության անձնական նպատակները. • բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին. • նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ. • մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ. • կատարել փաստաթղթավորում: • ցուցաբերել առաջին օգնություն: • մոդելի էսքիզին համապատասխան ընտրել գրպանի չափերը, կատարել գործվածքի ծախսի հաշվարկ և ձևի գրպանի մասնիկները,

	<ul style="list-style-type: none"> • մշակել գրպանների տարբեր տիպեր՝ հենքային դետալների կտրվածքներին և չորվածքներին համապատասխան, • կատարել գրպանի վերջնամշակում: • հաշվարկի մանր մասնիկների նյութածախսը, • ձևել և մշակել օձիքը, տեղադրի շղթան, • ձևի և մշակի թևքը, • ձևել և մշակել բազկակալը, ուսադիրը, կափարիչը և գոտին: • ընտրել գործվածքը և ձևի աստառը, • մշակել աստառը համաձայն մոդելի, • կատարել աստառի վերջնական ջերմախոնավամշակում: • վերցնել պատվիրատուի չափսերը, ստուգել գործվածքի որակը, կատարի համապատասխան հաշվարկներ և վերնաշապիկի էսքիզը, • ձևել գործվածքը ըստ մոդելի, • միացնել մշակված մասնիկները, • արտադրանքը բերել վերջնական տեսքի • ձևակերպել պատվերը, ստուգել գործվածքի որակը, վերցնել չափերը և կատարի համապատասխան հաշվարկներ, • ձևել գործվածքը և մշակելի մասնիկները • արտադրանքը բերել վերջնական տեսքի: • ստուգել գործվածքի որակը, կատարել էսքիզ, վերցնել չափերը, կատարել համապատասխան հաշվարկներ, • ձևել գործվածքը՝ հաշվի առնելով չափահասակային տվյալները, • մշակել մանր մասնիկները և միացնել արտադրանքին, • կատարել արտադրանքի վերջնամշակում: • մշակել կրծքի միջնադիրը, • միացնել կրծքի միջնադիրը լանջափեշին, • միացնի տակի բորտը լանջափեշին, • մշակել առանց կոկետկայի թիկունք, • մշակել կոկետկայով թիկունք, • մշակել թևը ըստ մոդելի: • ընտրել գլխարկ կարելու համար նյութեր. հիմնական և աստառացու գործվածք, սոսնձային միջնադիր, հովարի (կոզիրյոկ) նյութը և ռեպսե ժապավեն. • վերցնել գլխի շրջագծի չափսը հանի լեկալը , կավճագծի և ձևի մասնիկները. • մշակել մասնիկները. • մասնիկները միացնել իրար, արտադրանքը բերել վերջնական տեսքի:
--	--

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՐՀԵՍՏԱՎՈՐԻ «ԴԵՐՁԱԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Արհեստավորի «Դերձակ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. Պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների համապատասխան ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեսթային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 40 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին:

2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել հետևյալ գործողությունները՝

Ա) ըստ տրված մոդելի և պատվիրատուի պահանջի՝

1. ընտրում է գործվածքը և օժանդակ նյութերը
2. կատարում է նյութաձախսի հաշվարկ
3. սահմանված ժամանակում պատրաստում է հագուստը՝ պաշտպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշչով սահմանված՝ համապատասխան կատարման չափանիշներին համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները: